

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԿԸ ՊԱՏՈՒԷ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ
ԳԱԽԱՌԻ ՎԵՐԱԿԱՑՈՒ ՄԱՅՔԸԸ Տ. ԱՆՏՈՆՈՎԻԶԸ

Հայ Դատի Յանձնախումբին Տարեկան Ջորրորդ Ճաշկերոյթը փեղի ունեցաւ Ուրբաթ, Մայիս 8ի երեկոյեան ժամը 7:00ին Պըրպէնքի Արպաթ Ճաշարանին մէջ, որու ընթացքին յատուկ յայտագրով մասնաւոր պատուի արժանացաւ հայ ժողովուրդի բարեկամ եւ Հայ Դատի պաշտպան՝ Լոս Անճելըս Գաւառի Վերակացու՝ Յարգարժան Տիար Մայքըլ Տ. Անթոնովիչ:

Այս ձեռնարկին Առաջնորդ Սրբապան Հայրը ներկայացուց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգձ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարպըմեան, որ շնորհաւորեց Պրն. Անթոնովիչը եւ իր գնահատութիւնը յայտնեց Հայ Դատի Յանձնախումբին: